ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 512 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ — 29 ՆՈՅԵՄԲԵՐ 1861

ՄԱՍԻՍ

Տարեկան գինն է 140 դրչ
Վեցամսեայ „ 75 „
Մէկ ծանուցումը տողին 5 դրաբուլ է
Յառաջադրութիւններ կանխիկ են:
Յառաջադրութիւնները ամեն ամսոյն վրայ եւ 15ին կը սկսին:

ԼՐԱԳԻՐ

Դուռն եղբայրք լրագիրներուն ճամբու ծախքը առնողին վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ լսամ որ եւ իցէ գրութիւն խմբագրին պիտի ուղղուի. եւ ասոնց համրուն ծախքը իրեղուին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 29 ՆՈՅԵՄԲԵՐ

Եւրոպայի հասարակաց կարծիքն օրէ օր ձայնը կը բարձրացընէ Հռոմի աշխարհական իշխանութեան դէմ, և նոյն իսկ հռոմէական կղերին մէջ բաղմաթիւ զօրաւոր արձագանգներ կը գտնէ։

Հ. Ռասալիայի հրատարակութիւններուն բրած տպաւորութիւնը դեռ չանցած, ուրիշ կղերական հրատարակութիւններ կը յաջորդեն անոր, մի և նոյն դասին պաշտպանութեանը համար։

Հ. Ռերցիէթթի անուն երեւելի վարդապետ մը՝ որ Հռոմի հանճարաւորներին գլխաւորն է՝ տեսակ մը հրատարակեց «Պապութեան նոր պայմանները» մակագրով։ Յիշեալ կրօնաւորը կը հաստատէ, թէ Հռոմի խնդիրը նոր բան չէ։ Իտալիոյ նոր թագաւորութիւնը երեւան չհանեց զայն, այլ միայն անոր լուծման հարկաւորութիւնը յայտնի բրաւ։ Մի թէ Իտալիոյ ազգային շարժումը ծագելէն առաջ Գալլիոյ և Աւստրիոյ զօրքերը գրաւած չէ՞ին Պապին երկիրները։ Քաղաքակրթիւնը ա՛լ չկրնար արգելուիլ իր ընթացքին մէջ։ Հռոմի ասասուածոտութիւնը չկրնար համաձայնիլ արդի քաղաքակրթութեան հետ, և Պապին ու Իտալիոյ մէջ գոյգացած արդի ընկերութիւնը չկրնար միաբանիլ ասասուածոյին իրաւանց սիրան վրայ հիմնեալ աշխարհական իշխանութիւններու հետ, և Պապին աշխարհական իշխանութեանը համար ալ բացառութիւն չընդունիր։ Ուստի հարկ է, կրսէ, քաղաքակրթութեան և կանոնիկութիւնեան շահուն համար ջնջել Պապին աշխարհական իշխանութիւնը, և գանիկա մաքնաւորութենէն հոգևորութեան բարձրացընել։

«Իրաւունքն ու շահը այս օրուան օրս վերջին ծայր ձեռներէց, խնդամ և յեղափոխիչ են կրսէ։ Կառավարութիւններ տեսանք որ քանի մը ժամու մէջ կործանեցան, այնպիսի կառավարութիւններ՝ զորոնք մերնախնիքը քաղաքական գերիմաստ խորհուրդներու արդիւնք կը կարծէին։ Եւրոպացիներն իրենց դաղափարները ձեւակերպելու և անոնց անվիջապէս կատարումը խնդրելու համար ստատափելի զօրութիւն մը ստացած են։ Քաղաքակրթութիւնը դադրի կարօտ չէ, սանձի կարօտ է։ ասոր համար է որ տեսականի մէջ ամենէն աւելի ազատամիտները գործնականի մէջ շատ անգամ ամենէն կամակորներն են։ Մեն խորունկ մտածողներն համոզուած են որ կրօնական տարրը կենդանացընել հարկ է մարդկային ընկերութեան մէջ։ Չկայ պարկեշտ մարդ մը որ կրօնքը ասիկանութիւն մը ընել ուզէ՝ ինչպէս որ եղած էր Նարօլիի մէջ, և ինչպէս որ ժամանակաւ Սիցիլիոյ մէջ ալ ընելու փորձ փորձուեցաւ։ Մենք կուզենք որ կրօնքը անկեղծութեամբ քարոզուի և անկեղծութեամբ ալ դաւանուի։ Մենք գիտենք որ կաթոլիկութեան հոգին կրնայ բարեխառնել և ուղղել յեղափոխական հոգւոյն ուժգնութիւնը։ Պապին հոգևոր և բարոյական ազդեցութիւնը Իտալիոյ և Եւրոպայի համար մեծ բարիք մը կրլայ՝ թէ որ ինքը այլ ևս թագաւոր չըլայ։ Ուստիա Եւրոպայի ամենէն բիչ քրիստոնեացեալ ազգն է, թեպետ և ուրիշներէն պակաս մեղաւոր չէ թերևս։ ասիկա աղուստ է ծածկել։ «Մեք Իտալացիքս, կրսէ Մաքիավէլ, քահանայներուն և եկեղեցւոյ երեսէն է որ անկրօն և չար եղեր ենք։»

«Յայտնի է որ Եւրոպա մեծ պէտք ունի քրիստոնեայ ըլլալու, մանաւանդ Իտալիա։ Այս նպատակին հասնելու համար սկիզբէն պէտք է սկսինք։ Պապութիւնը պէտք է այն վիճակին դարձուցանել, ուր կը գտնուէր մեր առաջին անգամ քրիստոնեայ եղած ժամանակը։ Ջանանք Պապն այնպիսի ընել, ինչպէս որ պէտք է ըլլայ և պիտի ըլլայ։ Պապին այս նոր վիճակը անկասկած է, այլ բարձրացում է։ Այսուհետև Պապն տուերական անկախութիւն մը և ազատութիւն մը չպիտի գտնուէ երկրաւոր իշխանութեանց նմանութեամբ, այլ իր աստուածային օծմանը մէջ պիտի գտնէ իր լեսիատար ազատութիւնն ու անկախութիւնը։ Պապը միջոցին և ժամանակին մէջ ապրելով, առանց երկրիս տէր եղողին հպատակ ըլլալու, այլ անբռնաբարելի, ազատ, աշխարհի ժողովրդոց վրայ Աստուծոյ թագաւորութեան ամենակատարեալ խորհրդանշանն է։ Ի՞նչ վտեմ բան կրնայ տեսնել քահանայապետը ամեն տեղ ներկայ, ամեն տեղ հիւր, ամեն տեղ ազատ՝ ինչպէս խղճմտանքն ու ճշմարտութիւնը։ Մենք տեսանք Պապը զուարթներես շրջապատեալ, որ մեր եղբայրները լարի նեսական բաղդը հողին կը վաներ։ Տեսանք Պապը, որուն գլխուն բոլորտիքը՝ փոխանակ հրեշտակներու՝ ի մահ դատապարտեալ անմեղներու տուերներ կերևէին։ Մեր զաւակները Պապը սրբութեան պաշտպանութիւն չընե և իր ձեռքը Հռոմէն քաշէ, Ս. ժողովին մէջ այնպիսի վատութիւններ կը գործուին որ բոլոր աշխարհ կը դղրդեցնեն» կրսէ։

Գերմանական Լնտերբանտանս լրագիրն և Փարիզի Ռնսթիթիւսիոնել լրագիրը կրսեն թէ Ս. Հարօլէն կը սրբանա օրերս Լոնտրա երթալու միտք ունի։ Առաջինը կաւելցընէ նաև թէ այս ճանապարհորդութիւնը թագաւորաց ժողով մը ընելու դիտաւորութեամբ է։ Հաս քաղաքագէտներ կան որ յարմար առիթ կը փնտռեն ասանկ առաջարկութիւն մը ընելու։

«Եւրոպա այնպիսի կացութեան մը մէջ է, կրսէ յիշեալ լրագիրը, որ ընդհանուր պատերազմ մը տեսնելու պիտի հարկադրինք եթէ Եւրոպայի վերատեսչ տերութիւնները խաղաղական միջոցներով ձեռք չբերեն անհրաժարելի եղած փոփոխութիւնները։»

Գաղղիոյ լրագիրներուն շատին կարծիքն է թէ կառավարութիւնը տերութեան դանձուն երեւմտեան անհաւասարութիւնը վերց ընելու համար պիտի հարկադրի ցամաքային զօրաց թիւը 80 հազար հոգիի չափ պակսեցընելու, առ ժամանակեայ արձակուրդ մը տալով անոնց, և ուզած ժամանակը գրաշակին ներքև դառնալու պայմանաւ։ Այս արձակուրդը թէ որ տարի մը տեւէ, տերութեան գանձը 80 միլիոն ֆրանքի ծախք մը կը շահի։

Ռաթ-ի լրագիրը կրսէ թէ եւրոպական բոլոր մեծ տերութեանց ներկայ զինակայ զինեալ վիճակին մէջ Գաղղիա չկրնար իր զօրաց թիւը պակսեցընել առանց միւս տերութեանց համամտութեանը։ «Այս համամտութիւնը կը յուսացուի որ քիչ ժամանակն ձեռք կը բերուի։ բայց քանի որ ձեռք չէ բերուած, զօրք պակսեցընելու խնդիրը չկրնար Փարիզի մէջ լուծուիլ՝ առանց Ռեդբպաւրկի, Լոնտրայի, Ս. Իէենայի և Պեռլինի մէջ ալ միանգամայն լուծուելու» կրսէ։

Սպանիայի կառավարութիւնն Իտալիոյ նոր թագաւորութիւնը ճանչնալով, Նարօլիի անկեալ թագաւորին օրէն Մատրիտի մէջ գտնուած Նարօլիսի հիւպատոսներուն տումարները Ս. Իզաբելլի կառավարութեանը յանձնել չուզեց։ Նոր վայ չերմ բանակցութիւններ եղան երկու կառավարութեանց մէջ, և վերջապէս չկրնալով համաձայնիլ, Մատրիտի իսպանական դեսպան Գ. Թէնքբօ նոյեմբեր 14 26 ին իր անցագիրն առնելով Մատրիտէն մեկնեցաւ։

Գաղղիոյ և Օրլիէանի տահմանները Հնէ փաթի մօտ իրարմէ բաժնող Տաբրի հովիտը երկար ժամանակէ՛ի վեր վէճի նիւթ եղած է Գաղղիոյ և Օրլիէանի տերութեանց մէջ, բայց հովտին կառավարութիւնը Օրլիէանի ձեռքն է։ Այդ հովիտները գաղղիացւոց սահմանապահ վենտուրներն յիշեալ հովիտը կոխելով՝ քանի մը մարդիկ բռնած ըլլալնուն համար՝ երկու կառավարութեանց մէջ՝ վէճ բացուեցաւ, և երկար բանակցութիւններէ ետև՝ վերջապէս Օրլիէանցիներէ տարը վատարկեցաւ։ Գաղղիոյ կառավարութիւնը Տաբրի հովտին վայրը և զուտ հին վէճին լուծումը ուրիշ ժամանակի թողով՝ իր վերոյիշեալ սահմանագլուխը կոխող վենտուրները պատժեց և անոնց բռնած մարդիկը թող տուաւ։

Փարիզէն գերմանական լրագրի մը լուր կուտան թէ Ռուսիոյ կառավարութիւնը Լեհաստանի նեղտեմբր գոհացուցիչ յայտարարութիւններ ըներ է միւս տերութեանց։ Ս. Գլէբտանդր կայսրը հաստատութեամբ միտքը դրած է եղեր 1815ի դաշնագրութեանց հանճարն ինքնօրէն կատարութիւն տալ Լեհացւոց և Սահմանադրութիւն շնորհել Ռուսիոյ ժողովրդեան։

Ամերիկայէն եկած լուրերը նպաստաւոր են հիւսիսականաց։

Առանց նաւատորմիղը՝ հարաւայնոց ձեռքը եղած Ռոբ Ռոյալ նաւահանգիստը չորս ժամ ռմբակոծելով երկու բերդ առեր է, որուն մէջ 43 թնդանօթ, շատ մթերք և կարևոր թուղթեր գրաւնուեր են։ Հարաւայինները ձգեր փախեր են։

Անգղիական վերջին լրագիրներն հեռեւալ տեղեկութիւնները կուտան Անգղիոյ գրաշակին Ամերիկայոյ կողմանէ եղած անարդանոց գործին վրայ, որ առանց հարուցման մնալու ըլլայ նէ՝ պատերազմի առիթ պիտի ըլլայ։

Անգղիական Թրենթ անուն թղթատար շոգենաւը Գահանայի նեղուցին մէջ ամերիկացւոյ Սան Եաս ինթիանուն քարվէթին պատահելով իր գրաշակը պարզեց։ Սան Եասինթիա ալ իր գրաշակը պարզելով՝ ռմբոյթց թնդանօթի մը պարպեց անգղիական շոգենաւին վրայ։ Անգղիացի նաւապետը պատճառը հարցուց։ ամերիկացին ալ պաշտօնական մը և 10 մարդ զրկեց անոր։ Պաշտօնակատն իր մարդոցը հետ անգղիական շոգենաւը երթալով՝ հարաւայնոց ամերիկացւոյ կողմանէ Եւրոպա զրկուած գործակալներն ուզեց և միանգամայն նաւուն մէջ գտնուած ճանապարհորդներուն ցուցակը։ Անգղիացի նաւապետը մերժեց անոնց խնդիրը, ըսելով թէ այն գործակալներն Անգղիոյ դեսպանին պահպանութեանը ներքևն էին։ Այն ժամանակը ամերիկացի պաշտօնակալը նշան ընաւ Սան Եասինթիա լքորվեցին, որ իսկոյն 30 զօրական ու 60 նաւաստի զրկեց անգղիական շոգենաւին վրայ։ Առանց մէկ մասը մեր եղան սուսերամարտի, և հարաւայնոց Ամերիկայի գործակալները բռնեցին տարին։ Անգղիացի նաւապետն ըսաւ թէ ինքը Անգղիոյ կառավարութեան երեսփոխանը կը համարուի իր շոգենաւին մէջ, ուստի յանուն իւր կառավարութեանը կը բողոքէ այս գործին դէմ որ ապօրինաւոր բռնաբարութիւն մը է ազգային իրաւանց և ծովասպասակութիւն մը է։ Ամերիկայի նաւապետը՝ բռնած տարած գործակալներուն հետ՝ Նարօլիի նաւահանգիստը մտաւ։

կանչերուն համար քիչ մը նպաստ ուզել առնելէ ետք՝ շարունակեց իր ճամբան։

Անգլիական Մօրմնկ—Հօսթ լրագիրը կ՚ասէ թէ տէրութեան օրէնսդիրները վճռեր են թէ Ամերիկացիներն ամենևին իրաւունք չունեին Անգլոյ շոգենաւին մէջ գտնուող գործակալները բռնելու, և բրածնին թշնամանք մէն է Անգլոյ։ Ուստի Անգլիս լիակատար հաստատում պիտի ուզէ Մէյսոն—Սլիդէլ կառավարութենէն, և թէ որ ձեռք չբերէ, այն ժամանակը իւր իրաւանց դատը զինուոյ ոյժովնք պիտի յանձնէ։

«Մենք արդէն հազար թնդանօթի չափ նաւական զօրութիւն ունինք Ամերիկայի ծովերուն մէջ, կըսէ յիշեալ լրագիրը, և մինչև ամիս մը կրնանք այս զօրութիւնը աւելցընել՝ այն կերպով որ բոլոր Սան—Լասինթիներն անեւելեան ընդան ծովերուն մէջ էն, հիւսիսային նաւահանգիստները պաշարուին, և հարաւայոց հետ եղած պատերազմը շուտով և ուզղակէս լմնայ։ Ձենք կարծեր որ Միացեալ—Նահանգաց կառավարութիւնն այսպէս յիմարութեան և ինքնասպանութեան գործ մը մտաբերէ՝ մեր աբդար և անփոփոխելի խնդիրներս մերժելով»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմական գործոց պաշտօնեայ բարձրագոյն Մեհմէտ Ռիշտի փաշան անցեալ երեքշաբթի օրը օգոստոսի Ինքնակալին ներկայանալու պատիւ ունեցաւ։

Մեկնելու առենը՝ օգոստոսի Ինքնակալը առաջին կարգի Օսմանիէ պատուանշան շնորհեց անոր։

Մօլաս—Ալ՝ ազգքիոյ իշխանութիւնները միացընելու համար Ռ. Դրան և դաշնակից տէրութեանց մէջ բանակցութիւնները լմնալով, երկու իշխանութեանց բոլորովին միացմանը վերաբերեալ կայսերական հրովարտակն անցեալ շաբթու Ռուզա պէյին զկուեցաւ։

Պէրութէն լուր կուտան, թէ Լեբանանու մէջ պատահած վերջին խռովութեան վրայ՝ բարձրագոյն Ֆուատ փաշան՝ Լեբանանու կառավարիչ Ալ սեմ. Տաղուա փաշային առաջարկութեամբը՝ Մարոնիներուն Լուսաց Պարամ ազնուն մէկ գլխաւորը բռնել բանտարկեր է խռովութեան պատճառ և առաջնորդ ըլլալուն համար։

Թղթադրամոց վճարման յանձնաժողովին մինչև հիմա գաւառներէն ստացած մեծագոյն դրամոց գումարն է 198 323 Օսմանեան լիրա և 63 դուրուշ։

Այս ստակները գանձուց պաշտօնատան քարուկիր մթերանոցներուն մէկուն մէջ կը պահուին ի ներկայութեան Ալ սեմ. Պէյի փաշային որ թղթադրամոց վաճառման յանձնաժողովին նախագահն է, և Մ. Ընթօան Աֆէնդին և Ալի Հիլմի էֆէնտիին, որ նոյն յանձնաժողովին անդամ են։ Այս երկու վերջինը և դանձուց պաշտօնատան գլխաւոր արկղապետն՝ իրենց կնքովը կը կնքեն մթերանոցին դուռը և բանալին ալ յանձնաժողովին նախագահին կը յանձնուի։

Ռուսիոյ Թագաւորն Սպիտակ արծաթոյ պատուանշանին մեծ ժապաւէնը զբաղեց ծովային, գործոց պաշտօնեայ և ազգուններաց Մի շիր բարձրագոյն Մեհմէտ Ալի փաշային։

ԱԶԳԱՅԻՆ

Ազգային բարեպաշտական հաստատութեանց մէջ իր կարգ որութեամբն առաջին, և նոյն կարգադրութեան չափով ազգին անհրաժեշտ հոգածութեանը կարօտ եղող Ս. Փրկչի հիւանդանոցը՝ քանի ամիսներ՝ իվեր ազգային ցաւագին գաղութեան պատճառաւը լքեալ և անխնամ յե՛ւ ինդրութեան մէջ կը գտնուի։ Թէ ո՞քանի՞ մը բարեսէր անձինք, և գիտուորապէս վերջին Տնտեսական խորհրդոյն անդամներն Տ. Գէորգեան Գաստուն Գալուստ ազան յիշեալ. անայցելու հաստատութեան հոգատարութիւնը առաջ անանակեաց կերպով իր վրայ չառնէր, և շնորհակալութեան արժանի անձնանուիրութեամբ մը բարերար ազգայնոց օգնութեամբ դիմելով՝ «անօթի մնք» ոռոնացող չորս—հինգ հարիւր ողորմելիներուն հաց չհասցուներ, և անոնց առօրեական անհրաժեշտ պիտոյքը հնար եղածին չափ չհոգեթափեր, ինչ գիտեր։ Աստուած իմ, ի՞նչ կըլլային այն ողորմելիները։

Այս մուրացածոյ թշուառ վիճակին մէջ է այսօրուան օրս Ս. Փրկչի հիւանդանոցը։ ասիպողական և ապնապրելից վիճակ մը՝ որուն գարմանը ազգային ընդհանուր և անյապաղ օգնութիւնէ մը զատ ուրիշ միջոցով չկրնար հոգացուիլ։ Ասոր համար՝ կը փութանք բարեսէր ազգայնոց առատապատութեանը ներկայացընել հետևեալ յայտագրին ուռ՛ատ ազդարկութիւնը։

ՅԱՅՏԱԳԻՐ

Ազգային հիւանդանոցի արդի վիճակին։

«Ազգային Սահմանադրութեան հաստատուած օրէն՝ ի վեր՝ թէ Ռաղաքական ժողովոյն և թէ տեսուչ խորհրդոց գլխաւոր աշխատութիւններէն մէկն էր՝ Ս. Փրկչի վանուց և հիւանդանոցին ներքին բարեկարգութիւնը, և այն տեղին բարեմասնիկ պատասխանելոց միջոցներուն ու հանգստութիւնը, որն որ լեռվին՝ ի գործ դրուելու համար սովորական եկամուտը չբաւելով և մեծագոյն մասն պակասելով, թէ՛ ազգաբաստէր բարեպաշտից նպատակը և թէ՛ մանաւանդ խնամակալ Տիկնանց զթալիր այցելութեան շնորհիւ՝ բոլոր անկելոց և հիւանդաց հանգերձական պիտոյքը և կահ կապարին նորոգուելով՝ ըստ բաւականին երջանիկ օրեր վայելեցին այն կարօտեալները, որոց նաև երախտագէտ ղգացման և շնորհակալութեան գոհութիւնները ամէն տեղ լսուեցան, և ամէն սիրտ բերկրեցան՝ օրհնելով մեր ջերմեռանդ խնամակալաց և բարերար այցելուաց մարդասիրական և քրիստոնէական վարմունքը, որով անմոռանալի երախտեաց յիշատակ մը ապաւորեցաւ ազգին Ազգասիրաց սրբաբերան մէջ։

«Բայց որովհետև մանրի վերջը՝ ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան Յարգոյ պաշտօնեայք իրենց կամաւոր հրաժարականը քաղաքական ժողովոյն մատուցանելով, իրենց պաշտօնէն դադրեցան, Տնտեսական խորհուրդը անմիջապէս գործադրեց հոգաբարձու պաշտօնեից ընտրութիւնը և անոնց անուանց ցուցակը հաղորդեց Ռաղաքական ժողովոյն, որ ընդունուեցան և հրաւիրանոք հաստատուեցան նոյն պաշտօնին մէջ։ Անոնք՝ գեռ իրենց պաշտօնին ձեռք չդարկած, մանաւանդ թէ զանազան պատճառներ յառաջ բերելով կամ լաւ և աս գործոյն գժուարութենէն խուսելով, իրենց ազատամութիւնը յայտնեցին ու ետ կեցան։ Դժբաղդաբար ազգային յուսմանց և շքոթութեանց վէճերը ծագելով՝ անհամաձայնութեան ոգին ակսեց Ազգին մէջ, և բոլորովին գադրեցաւ Հոգաբարձութեան պաշտօնը, ինչպէս նաև ազգային բոլոր խորհուրդները։

«Ասոնց յաւարտելէն յետոյ թէ՛ Ազգիս և թէ՛ ազգաբաստ տանը համար՝ ամենասոսկալի հարուածմը ըլլալով՝ մեր ազգաբնակները տառապեալ և յուսահատելի վիճակի մէջ մնացին, և անոնց կեցութիւնը դրեթէ բոլորովին վտանգաւորուեցաւ։ Ամէն ոք իր կարն որութեամբն առաջին, և նոյն կարգադրութեան չափով ազգին անհրաժեշտ հոգածութեանը կարօտ եղող Ս. Փրկչի հիւանդանոցը՝ քանի ամիսներ՝ իվեր ազգային ցաւագին գաղութեան պատճառաւը լքեալ և անխնամ յե՛ւ ինդրութեան մէջ կը տառապի։ Թէ ո՞քանի՞ մը բարեսէր անձինք, և գիտուորապէս վերջին Տնտեսական խորհրդոյն անդամներն Տ. Գէորգեան Գաստուն Գալուստ ազան յիշեալ. անայցելու հաստատութեան հոգատարութիւնը առաջ անանակեաց կերպով իր վրայ չառնէր, և շնորհակալութեան արժանի անձնանուիրութեամբ մը բարերար ազգայնոց օգնութեամբ դիմելով՝ «անօթի մնք» ոռոնացող չորս—հինգ հարիւր ողորմելիներուն հաց չհասցուներ, և անոնց առօրեական անհրաժեշտ պիտոյքը հնար եղածին չափ չհոգեթափեր, չենք գիտեր։ Աստուած իմ, ի՞նչ կըլլային այն ողորմելիները։

Այս մուրացածոյ թշուառ վիճակին մէջ է այսօրուան օրս Ս. Փրկչի հիւանդանոցը։ ասիպողական և ապնապրելից վիճակ մը՝ որուն գարմանը ազգային ընդհանուր և անյապաղ օգնութենէ մը զատ ուրիշ միջոցով չկրնար հոգացուիլ։ Ասոր համար՝ կը փութանք բարեսէր ազգայնոց առատապատութեանը ներկայացընել հետևեալ յայտագրին ուռ՛ատ ազդարկութիւնը։

ՅԱՅՏԱԳԻՐ

Ազգային հիւանդանոցի արդի վիճակին։

«Ազգային Սահմանադրութեան հաստատուած օրէն՝ ի վեր՝ թէ Ռաղաքական ժողովոյն և թէ տեսուչ խորհրդոց գլխաւոր աշխատութիւններէն մէկն էր՝ Ս. Փրկչի վանուց և հիւանդանոցին ներքին բարեկարգութիւնը, և այն տեղին բարեմասնիկ պատասխանելոց միջոցներուն ու հանգստութիւնը, որն որ լեռվին՝ ի գործ դրուելու համար սովորական եկամուտը չբաւելով և մեծագոյն մասն պակասելով, թէ՛ ազգաբաստ բարեպաշտից նպատակը և թէ՛ մանաւանդ խնամակալ Տիկնանց զթալիր այցելութեան շնորհիւ՝ բոլոր անկելոց և հիւանդաց հանգերձական պիտոյքը և կահ կապարին նորոգուելով՝ ըստ բաւականին երջանիկ օրեր վայելեցին այն կարօտեալները, որոց նաև երախտագէտ ղգացման և շնորհակալութեան գոհութիւնները ամէն տեղ լսուեցան, և ամէն սիրտ բերկրեցան՝ օրհնելով մեր ջերմեռանդ խնամակալաց և բարերար այցելուաց մարդասիրական և քրիստոնէական վարմունքը, որով անմոռանալի երախտեաց յիշատակ մը ապաւորեցաւ ազգին Ազգասիրաց սրբաբերան մէջ։

«Բայց որովհետև մանրի վերջը՝ ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան Յարգոյ պաշտօնեայք իրենց կամաւոր հրաժարականը քաղաքական ժողովոյն մատուցանելով, իրենց պաշտօնէն դադրեցան, Տնտեսական խորհուրդը անմիջապէս գործադրեց հոգաբարձու պաշտօնեից ընտրութիւնը և անոնց անուանց ցուցակը հաղորդեց Ռաղաքական ժողովոյն, որ ընդունուեցան և հրաւիրանոք հաստատուեցան նոյն պաշտօնին մէջ։ Անոնք՝ գեռ իրենց պաշտօնին ձեռք չդարկած, մանաւանդ թէ զանազան պատճառներ յառաջ բերելով կամ լաւ և աս գործոյն գժուարութենէն խուսելով, իրենց ազատամութիւնը յայտնեցին ու ետ կեցան։ Դժբաղդաբար ազգային յուսմանց և շքոթութեանց վէճերը ծագելով՝ անհամաձայնութեան ոգին ակսեց Ազգին մէջ, և բոլորովին գադրեցաւ Հոգաբարձութեան պաշտօնը, ինչպէս նաև ազգային բոլոր խորհուրդները։

«Այն ցաւալի դէպքը թէ՛ Ազգիս և թէ՛ ազգաբաստ տանը համար՝ ամենասոսկալի հարուածմը ըլլալով՝ մեր ազգաբնակները տառապեալ և յուսահատելի վիճակի մէջ մնացին, և անոնց կեցութիւնը դրեթէ բոլորովին վտանգաւորուեցաւ։ Ամէն ոք իր կարն որութեամբն առաջին, և նոյն կարգադրութեան չափով ազգին անհրաժեշտ հոգածութեանը կարօտ եղող Ս. Փրկչի հիւանդանոցը՝ քանի ամիսներ՝ իվեր ազգային ցաւագին գաղութեան պատճառաւը լքեալ և անխնամ յե՛ւ ինդրութեան մէջ կը տառապի։ Թէ ո՞քանի՞ մը բարեսէր անձինք, և գիտուորապէս վերջին Տնտեսական խորհրդոյն անդամներն Տ. Գէորգեան Գաստուն Գալուստ ազան յիշեալ. անայցելու հաստատութեան հոգատարութիւնը առաջ անանակեաց կերպով իր վրայ չառնէր, և շնորհակալութեան արժանի անձնանուիրութեամբ մը բարերար ազգայնոց օգնութեամբ դիմելով՝ «անօթի մնք» ոռոնացող չորս—հինգ հարիւր ողորմելիներուն հաց չհասցուներ, և անոնց առօրեական անհրաժեշտ պիտոյքը հնար եղածին չափ չհոգեթափեր, չենք գիտեր։ Աստուած իմ, ի՞նչ կըլլային այն ողորմելիները։

Այս մուրացածոյ թշուառ վիճակին մէջ է այսօրուան օրս Ս. Փրկչի հիւանդանոցը։ ասիպողական և ապնապրելից վիճակ մը՝ որուն գարմանը ազգային ընդհանուր և անյապաղ օգնութենէ մը զատ ուրիշ միջոցով չկրնար հոգացուիլ։ Ասոր համար՝ կը փութանք բարեսէր ազգայնոց առատապատութեանը ներկայացընել հետևեալ յայտագրին ուռ՛ատ ազդարկութիւնը։

ՅԱՅՏԱԳԻՐ

Ազգային հիւանդանոցի արդի վիճակին։

«Ազգային Սահմանադրութեան հաստատուած օրէն՝ ի վեր՝ թէ Ռաղաքական ժողովոյն և թէ տեսուչ խորհրդոց գլխաւոր աշխատութիւններէն մէկն էր՝ Ս. Փրկչի վանուց և հիւանդանոցին ներքին բարեկարգութիւնը, և այն տեղին բարեմասնիկ պատասխանելոց միջոցներուն ու հանգստութիւնը, որն որ լեռվին՝ ի գործ դրուելու համար սովորական եկամուտը չբաւելով և մեծագոյն մասն պակասելով, թէ՛ ազգաբաստ բարեպաշտից նպատակը և թէ՛ մանաւանդ խնամակալ Տիկնանց զթալիր այցելութեան շնորհիւ՝ բոլոր անկելոց և հիւանդաց հանգերձական պիտոյքը և կահ կապարին նորոգուելով՝ ըստ բաւականին երջանիկ օրեր վայելեցին այն կարօտեալները, որոց նաև երախտագէտ ղգացման և շնորհակալութեան գոհութիւնները ամէն տեղ լսուեցան, և ամէն սիրտ բերկրեցան՝ օրհնելով մեր ջերմեռանդ խնամակալաց և բարերար այցելուաց մարդասիրական և քրիստոնէական վարմունքը, որով անմոռանալի երախտեաց յիշատակ մը ապաւորեցաւ ազգին Ազգասիրաց սրբաբերան մէջ։

«Բայց որովհետև մանրի վերջը՝ ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան Յարգոյ պաշտօնեայք իրենց կամաւոր հրաժարականը քաղաքական ժողովոյն մատուցանելով, իրենց պաշտօնէն դադրեցան, Տնտեսական խորհուրդը անմիջապէս գործադրեց հոգաբարձու պաշտօնեից ընտրութիւնը և անոնց անուանց ցուցակը հաղորդեց Ռաղաքական ժողովոյն, որ ընդունուեցան և հրաւիրանոք հաստատուեցան նոյն պաշտօնին մէջ։ Անոնք՝ գեռ իրենց պաշտօնին ձեռք չդարկած, մանաւանդ թէ զանազան պատճառներ յառաջ բերելով կամ լաւ և աս գործոյն գժուարութենէն խուսելով, իրենց ազատամութիւնը յայտնեցին ու ետ կեցան։ Դժբաղդաբար ազգային յուսմանց և շքոթութեանց վէճերը ծագելով՝ անհամաձայնութեան ոգին ակսեց Ազգին մէջ, և բոլորովին գադրեցաւ Հոգաբարձութեան պաշտօնը, ինչպէս նաև ազգային բոլոր խորհուրդները։

«Ասոնց յաւարտելէն յետոյ

չունենալով՝ դալ շարթուան կը թողունք։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Դրամոյ գինեբուն բարձրանալը երկուքնե՛ի մէկ գարհուրելի կերպարանք մը առաւ։ Երեկ իրիկուն Օսմանեան լիրան մինչև 240 գուրուշի հասած էր թղթադրամով։ այսօր ա՛լ աւելի բարձրացաւ, և կը ըսենք թէ մինչև 300ի հերիւր։ Ընհնարաւոր է պատմել շուկային մէջ տիրած շփոթութիւնն ու տագնապը։ Գաղութները դադրած են և խանութները կը գոցուին։

Դրամոյ այսպէս մէկէն՝ի մէկ և տարապայման բարձրանալուն էական պատճառ մը չկրնալով դրուիլ, Ղալաթիոյ հատավաճառներուն ապշրնաւոր շահադիտութեանց արդիւնքն ըլլալ կը կարծուի։

—Ընդհանուր շարթուան փոխարինելուն ժամանակը քանի՛ մը ամիս բարձ նաւեր՝ որ Սև Ծովէն ու Դանուբէն ցորեն առեր Եւրոպա կերթային, Սիլիւեստրի Ծովերեքնեքը ցամաքն ինկեր խորտակեր են։

—Պրուսայի շրջակայ անտառներուն հրդեհը դեռ կը շարունակէ եղեր անցեալ շաբթու, բայց Պրուսացիներն հեռանալով գեղջ՝ի Ինինեկիոլ կը քաշուէ եղեր։

—Իզմիրէն լուր կուգան թէ Սեմիրիոյ փարշան յիշեալ՝ քաղաքէն մեկներ է Դամեա իր պաշտօնատեղին երթալու համար։

— Ընդհանուր շարթու տեսչութիւնը Մարբօ անունով Խրուաթի մը բռնեց, որ գեղեցիկ օրիորդի մը հետամուտնալու փափաքելով, երբոր չէ կրցեր քաղաքութեամբ գանի հաճեցընել, գաշտնով տիրացելու երեր էր։

—Ընդհանուր ատրոմ մը նիրկայացաւ Տեղութեան դուռը և բատ թէ ինքը կարողութիւն ունի մնդական աղօթքներով մեռցընելու այն մարդիկը որ յանցաւոր են և կուրանան յանցանքնին։ «Օրինակի համար թէ որ չորս կամ հինգ տարատանեալ գանուի, ըսաւ, և ամենն ալ գործուած յանցանքը ուրանան, ես աղօթք մը կը կարդամ և յանցաւորը ան է նէ իսկոյն կ՚ինայ կը մեռնի»։ Այս ըսածն հաստատելու համար՝ ատարը հաւ մը բերել կուտայ, իր մոգական աղօթքը կը կարդայ, և քիչ մը ետքը հաւը կը մեռնի։ Այս կ՚ածեցեալ մոգը վար գլորուեցաւ և կը քննուի։

— Զապթիէի կանանց բանտապետուհին անցեալ կիրակի իրիկուն թունաւորուեցաւ բանտարկեալ կանանց ձեռքով, որոնք հնդիկ ընկուզի եփած ջուրին մէջ Սուլիմէն խառներու իրեն խմցուցեր են։ Բարեբաղդաբար Զապտիէի քանանքուն՝ Վերատեսուչ Էֆէնտի՝ ժամանակ չանցած՝ ազգու թոյնթափ մը անոր խմցուցեր ու մահուան վտանգէն ազատեր է։

—Հնդկաստանէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ Բոլեան կը շարունակէ իւր կոտորածը Հայատի և Գանտահարի մէջ։ Մեռնողներուն թիւը 360ի կը հասնի։ Միսն Տէյլի նահանգին մէջ 2161 հոգի մեռեր է։

—Ռէզայիի Ալեպոյ լրագրին հետեւեալ լուրը կուտայ։

«Ժամանակէ մը՝ի վեր քանի մը ապրանքներ Ռէզայիի փողոցներուն մէջ առատ առիւծ մը կը պատնեն, որ ոչ խոպի՝ մը պէս հնազանդութեամբ եւ տանուն կերթայ, թէպէտ ոչ ցոր կապած ունի և ոչ իր ահագին ճիրաններն ուսկանները հանուած են։

«Այս արաբները Մի Մոհամմէդ ոմն Խաւսա անուն շէյխի մը հատուած եղբարութեան անդամներէն են։ Մինչ Լ շէյխին գամարանը (թիւրքէ) Ալ Պօրոյի լեռանց առոգան է։ Ամը պատմին ապրանքը թէ ամեն տարիւն մը կերթայ յիշեալ սուրբին գամրանը կը մնայ և գերեզմանին օրով կը նստի։ Գամրատանին ապատաւորներն ա՛ռիւծին քովը կերթան ու կը հրաւիրեն որ իրենց եռանէն դայ, ան ալ խոկոյն կը հնազանդի։ Ընդհանք ալ դանի բոլոր շրջակայ երիտներն այսպէս պատուաւորելով ուղղութիւն կը հաւաքեն գամրատանին ծախսերը հատանելու համար։»

— Նորօրեայ լրագիր մը հետեւեալ դէպքը կը պատմէ։

«Խպերթիա անուանով ամուսնացեալ կին մը ժամանակէ մը՝ի վեր ապօրինաբար որ յարաբերութիւն հաստատեր էր Լաֆիերտա անուանով երեսնամեայ երիտասարդի մը հետ։

«Այս երիտասարդը ձանձրանալով Խպերթիայեն՝ ուզեց զանի թողուլ, և իմացուց իրեն որ օրինաւոր կերպով օրիորդի մը հետ ամուսնանալու դիտաւորութիւն ունէր։ Այս բանը Խպերթիային սասիկ նախանձը շարժեց։

«Նոյեմբեր 8 ին երիտասարդը դորձի համար Պօսթիրէքաչէ գեղը երթալով։ Խպերթիա կարծեց թէ առնելուզած օրիորդին հետ տեսնուելու կերթար։ ուստի միտքը դրաւ որ այս անհաւատարմութեան վէճին առնու երիտասարդէն։

«Երբոր երիտասարդը եւ դարձաւ ու գիշերն անկողին մտնելով՝ քունը տարաւ, Խպերթիա անոր ձեռքն ու ոտքը կապեց ու ածելի մը առնելով՝ զանի ներքինացուց։ Դժբաղդ երիտասարդը հիւանդանոց տարուեցաւ ու հոն կը դարմանուի։ Բժիշկները կը հաստատեն թէ կեանքը վտանգէ ազատած է։

«Ըսուի թէ Խպերթիա՝ առաջնորդարանն ալ՝ Պէյերեանի օրինակին պէս՝ գեղի հեռուի, այսինքն կրօնաւոր պիտի ըլլայ։»

—Խրատրոյս մամուլը դրուած ժամանակը կը լսենք թէ կայսերական կառավարութեան հրամանաւ Խարէոր խանի և Էլ. Պօլոյ հաստավաճառաց ժողովները (պօրսա) գոցուեր են։

Հետեւեալ նամակը Սիկոմիդիոյ՝ արդարան առաջնորդին և տեղւոյն պատուաւոր ժան երեւելեաց ուշադրութեանը կը յանձնենք։

Մեծարգոյ խմբագիր Մասիս պատուական լրագրոյ։

Եթէ առուգիւ դասակրութիւնը բարոյական կենաց մտնդն է, եւ ուսումն ու կրթութիւնը բարոյականին հիմը եւ մեայ ու սրտից ը պտերը, եթէ ապաքէն մարդս անդան արարածներէն որոշելու առաջին փոնաքարը իւր լեզուն, կրօնքը, դասակրութիւնը, ուսումն եւ կրթութիւնն է, ուրեմն բարոյապէս մտեալ պէտք է համարել այն ազգը՝ որ այս բարոյական մտունդներէն զուրկ է։ Զանգի ազգի մը յառաջադիմութիւնը իւր արական եւ իգական կրկին սեռին դասակրութենէն կախում ունենալով, եւ դասակրութեան ազդիւրը Նախնեաց մեծ ազգերուն կերդասանութեան յանձնելով, եւ գերդասանները կացուցանողներն ալ մայրերը լինելով, կը հետեւի ուրեմն որ գեղեցիկ սեռին՝ այսինքն ազգկանց դասակրութիւնն եւս նոյնչափ առաւել օգտակար է եւ պիտանի, որչափ մանկանցը. ըստ որում մարդուս դասակրութեան բուն ժամանակը իւր գոյութեան առաջին կեանքն համարելով, հետեւաբար նորա առաջին դասակրիչներն ալ անտարակոյս մայրերը պարտին ըլլալ։ . . . .

Անշուշտ ասոնք երկու սեռին եւս անխտիր դասակրակութիւն, ուսումն ու կրթութիւն մատակարարելու եւ այս բարոյական մտունդը հայթայթելու եւ հոգւոյն արմին ու մաքին ջամբելու միջոցը կամ բաւ եւս ըսել կեղրանն ու կրթութեան տաճարը դրպրոցներն ըլլալն ուրանալու չափ ապուշ Հայ մը չգտնուիր։ Այս համոզմամբ է անշուշտ որ լուսաւորեալ Եւրոպան դպրոցայ արատդրած անբաւ յառաջադիմութիւնները տեսնելով՝ սկսաւ խոշորացուցով դիտել մանկութեան դասակրակութեանը վրայ, եւ գրեթէ բնաւ ամենայն ազգ հասկանալուն որ դպրոցներէն կախումն ունին իրենց ներկայ սերունդին ապագայ բարոյական եւ քաղաքական զարմացումն ու յառաջադիմութիւնը։ հասկանալուն այդ՝ որ ապագայ սերունդի մը բարօրութիւնը ներկայ սերունդին անխտիր երկու սեռին դասակրակութենէն ու կրթութենէն կախեալ է։

Դասակրակութեան անժխտելի կարեւորութիւնը եւ դպրոցաց անհրաժեշտ պէտքը այսքանիւ մը ապոյ տալէն վերջը՝ ներեցէք ինձ, մեծարգոյ տէր, որ պատուաւոր ան թերթերուդ միջոցաւ Նիկոմիդիոյ իմ հայրենակցաց վրայ հայեցուած մը ընելու համարձակիմ։ Հրապարակաւ խօսելու բազդն այս առաջին անգամն է ինձ, եւ թէպէտ խօսքս ամենայն անձանց համար թերեւս յանդուգն հանդիսանալ քննադատութիւն ընելու մեղադրելի ընթացքի մը վրայ, բայց մեր դադրն կարգութեան, որ գոնէ այսչափ մը հայացի գրիչ մը շարժելու կարող եղայ, ասիարար խորհելու անպատճառն ըլլալը հոգ չէ թէ ինչ ինքնայր ալ որ ունենայ։

Նիկոմիդիա չունի՞ արդեօք երկու սեռին համար յատուկ դպրոցներ։—Եթէ նիւթական շէնքը մեր գաղափարներուն մէջ բարոյական օգուտներն երաշխաւորելու, այս նիւթականապէս հոս երկու սեռն ալ դպրոց ունի։ բայց աւա՛ղ մեր մանկութեան ճակատագրին, բարոյական կարգութեան տակ կը հեծեն երկոքին եւս հաւասարապէս։ ուսումնական անուանեալ խորհրդոյ մը խնամոյ՝ եւ երեսփոխանութեան պաշտպանութեանը յանձնուած են երկոքին եւս։ ըսել է որ նոցա յառաջադիմութիւնը կամ յետադիմութիւն՝ շարժումը կամ ուսումնական խորհրդին եւ կամ միանգամայն երեսփոխանութենէն կախուած պիտի ըլլար։ ըսել է որ ուսումնական խորհուրդն ուղղակի պատասխանատու պիտի ըլլար բարեկարգութեան եւ ներքին ու արտաքին տարահաղորդութեան բարոյապէս։ եւ երեսփոխանութիւնը նիւթական պիտոյից հոգատար, քա՛ջալերիչ, վերջապէս ընդհանուր վարիչ եւ հանրապետ։ Երկոքին եւս կատարեցի՞ն արդեօք իրենց պարտքը։ եթէ դիտակցութեան թերագրութեամբը պիտի խօսինք, ներողութիւնն ինքզինքով մեր խօսքին առաջ թող իջնոց խղճին ունկնդիր ըլլան, թերեւս հրապարակական թերթի մը աւելի լսելի ը լայ իրենց խղճին ձայնը։ Այ՛ Նիկոմիդիա գոգցես լոկ գարուս անտրամեցա խմբանէն սիմափուած իրեն ներկայ մտտաղ սերունդին համար կրթութեան նիւթական տաճարներ կանգնած է։ բայց թէ արդեօք գարուս լուսաւորութեան համաձայն կրա՞ծ է պատուգ վայելել, քննութեան էական կէտն հոս է։ հոս խոշորացուցով դիտել պարտն է, քանզի բուն հոս լուսութիւնը մտայն խոմիութեան պատճառ պիտի լինի աշակերտի մը ընդունակ ձեղն ապրելու համարձակած է։ Զղեցաչութիւն ըներան մը 4 61 տարեայ սիրտերը իւր խելքին թերի կանգնումը չավելցուցեց։ Լուսաւորչեան վարժարանիս եռամեայ բարեկարգ ընթացքը՝ որ միայնութեանկերպով կը նեղուէր ազգային մուտքերուն յուսկիլտս վատնուելուն համար։ դրուելը ուզեց տեսնել արբանեակի անտեղեակը։ եւ քանզի իրեն եւ իրենմանեանցը դատն էր դիտութեան ծառին պտուղը, քննութեան հրեշտակին թեւերը հեծած ազգային իշխանաց ժողովոյն մէջ վէճ հանեց թէ Լուսաւորչեան վարժարանը ոգոյ է ճիշդ իր խելքին նման։ ապացոյց չէր պակսեր ցոյց տալու այս չարաբոդիանքը, միայն լսելի ականջ չէր մնացեր բաց՝ի քանի մը ոգեջամիաներէ՝ որոնց ատեն ընդդիմութիւնը ճիգն ու փոյթը եւ յուզմունքը նոյն իսկ Գեր։ Աստուծոյ՝ ոչ ոչ ունկնդրը զուանչիւն թուեցաւ։ քանզի վատութեան արձագանք մը մէկ կողմէն հնչեց ՀԷՆ (ԿՈՐԾԻՔ) ԵՕՐԸ ՀԱՍԱՒ ԲԱՆԷՆ ԱՒԼԷ ԻՆՉ ՕՐԻՆԱՒՈՐ ԳՈՒՇԵԼՈՎ։ երրորդ մը Սամանդ Վր Կորոլը ՀԷՆ բաւ, եւ որբազան Լուսաւորչին թագաւորութեամբը Լուսաւորչեան վարժարանս իւր օրահաս չունչն հանեց։ Այս ամեն վատութեանց բաղդատանք մը պէտք էր։ դրամական նեղութիւն անուանեալ նեռը առ ձեռն պատրաստ գործի էր նոցա ձեռքը, իբրեւ թէ Նիկոմիդացի ժողովուրդը այնչափ ապուշ է, որ իւր որդեկին հաց ուզած ժամանակը քար՝ կամ թէ ձուկ ուզած ժամանակը օձ տալու վայրագութիւնը ունեցած ըլլայ։ իսկ մենք լաւնք ազգային մուտքերուն ինչ միջոցներու գործածուիլը . . . . : Խեղճ ժողովուրդն այս մտցից բան վախճանը իմացաւ, երբ անձնանուէր գասասուք՝ իբրեւ մարդ՝ եւ պատուոյ եւ զգացման տէր՝ ապականակիր սրանաւ քուրուսին քարշելով գրկուած իրենց արդար վարձքէն հրաժարեցան։ դպրոցին գասոիարակութեան ապարէզը արժանաւորագոյններու, կարողագոյններու եւ շեմ գիտեր ինչ գոյններու ձրգելով, եւ հանգիստ ըլլալու պաշտօնն առին։ Հառաջեցին, ախտաստին մաս մը ոգեջամիներ որ դպրոցին խնամակալութիւն էին եւ են, եւ այսօր իսկ ազգային երեսփոխանութեան մէկ մասը կը կազմեն. զաւկի տէր հայրը անիծիւք ողջունեց բուն այս չարեաց պատճառները. մինչեւ անգամ աշակերտակիցներէս մէկը բաղաքեց մեր հոգեւոր Առաջնորդին նախագահութեամբը կազմուած երեսփոխանաց ժողովին, բայց ինչ արձագանք գրատաս . . . . հոս գարձեալ ըսելը պատշաճ կը սեպնամ, որպէս զի չամչնամ հայրենեաց երեսփոխանութեան ազէտ մասին փոխանակ։

Ահա՛ այսօր յայտնապէս Նիկոմիդիոյ հորիզոնին վրայ Արեգակն ու Լուսինը խաւարման վիճակի մէջ է. բարոյապէս ըսելու ալ կամենամ, Նիկոմիդիոյ դպրոցներն այսօր բարոյապէս կործանման մէջ են, բարոյապէս գոց են, դեղեցիկ սեռին դպրոցը եւ նոյա գասախարակութիւնը՝ որ թէ՛ մարդը եւ թէ՛ ազգը նախապատրաստող, նախասահմանեալ, առաջին, բնական, գորովալից ու ծայրագոյն գասախարակներ պատրաստելու յատկացած պիտի ըլլայ (մօտերս Փարիզաբնակ Հայ գրագէտի մը պատշաճապէս ըսածին պէս), եւ ազգին առաքինի եւ բարեպաշտ մայրեր հասցունելու որբաղան պաշտօնն ունի, աւաղ՝ այսօր երկոքին ալ՝ բոլորովին գոց է։ Ցեղեցիկ սեռին դպրոցը՝ նոյնպէս

տեղը կը մաչէ։ . . . . . .

Ուրեմն, մեծապատիւ տէր, խնայելով մեր Նիկոմիդիոյ նոր սերունդը, խնայելով ազգային ապագան, խնայելով ազգին վաստակած սուակը, խնայելով վերջապէս ազգին պահանջած օգուտն ուսումնադիմութիւնը, կաղաչեմք յանուն ազգութեան, յանուն յառաջադիմութեան, յանուն ազգասիրութեան, եւ յանուն ձեր ազգային փափուկ պաշտաման, բարեհաճեցէք ձեր պատուական թերթին միջոցաւ յորդոր մը տալու եւ արծաթելու մեր սառած սրտերը, յորդոր մը որ ուղղեալ ըլլայ ոչ միայն հասարակութեան Նիկոմիդիոյ, այլ մանաւանդ առ իւր հոգեւոր դէսը, առ իւր երեսփոխանական ժողովը եւ ուսումնական անուանեալ խորհուրդը, որպէս զի սիրելին մեր թէ՛ Լուսաւորչեան հաղորդաց դպրոցին եւ թէ՛ մեռած Գայիանեանց վարժարանին վարչութեան անձը ձեռք առնելու, զանոնք բարեկարգելու, անոնց նիւթական եւ բարոյական պէտքերը հոգալու, անոնց բարոյական կործանմանը վերակենդանութիւն տալու, երկու սեռին անխտիր ուսումն ու կրթութիւն եւ բարոյական մնունդ մատակարարելով, որպէս զի միջին դարու տգիտութենէն յաղթուելով ներկայ լուսաւորեալ դարուս մէջ ալ տմոթանար չմնանք։ Այո՛, դարձեալ կաղաչեմ մեծապատիւ տէր, ձեր այդ ազգասիրական փափուկ պաշտաման գործադրութեամբը թէ եւ «Զան բարբառոյ յանապատի» իսկ ըլլաք, ձեր պարտքը պակի կատարած ըլլաք։ Իսկ եթէ լսեն ի ըլլան մեր եւ ձեր ազգերները, Նիկոմիդիոյ նոր սերունդը ժամանակիս պահանջած ուսումն ու կրթութիւնը ընդունելով, ապագային ազգին օգտակար անդամներ եղած տեսնելն, բարի ու առաքինի մայրեր հասած տեսնելն, եւ Հայկեան դերդաստանը բարեկարգուած ժամանակը, վերջապէս այդ աշխատութեան պըտղուած ժամանակը, ներկայ եւ ապագայ սերնդոց զարգացումն ու լուսաւորութիւնը մասամբ իւրք ձեր ազգասիրութեան եւ ջանից իսկ պտղը պիտի ըլլայ, ու փոխարէն երկնից օրհնութիւնը պիտի տեղան անչուշտ ոչ միայն իրենց բարերարաց վրայ, այլ ձեր անունն ալ օրհնութեան ալեալ մը պիտի ընդունի։

Որով մնամ եւ այլն։

Ի Նիկոմիդիա Ն. Թագւոր Խոսրով
1861 Նոյեմբ. 14 Լսկիճեան
Աշակերտ Լուսաւորչեան վարժարանին Նիկոմիդիոյ։

Գալատու Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ թաղին մէջ նոր կառուցանելիք մանչ եւ աղջիկ ազգայոց դպրատան շինութեանը համար բարեսէր Ազգայիններէ չնորհուած նպաստին ցուցակը։

(Շարունակութիւն*)

Ղուրուշ

113760 Նախընթաց թուոյն գումարը**.
250 Փիլիպոսեան Յակոբ աղա.
250 Մօնսիէօ Նաւարա Հաճեար.
500 Խուզաթերեան Նազարէթ և Մարկոս աղայք.
100 Սինան աղա.
100 Քարայեան Գէորգ աղա.
100 Թօփճանէլեան Գէորգ աղա.
100 Բաբէլեան Մկրտիչ աղա.
50 Մօնսիէօ Նասրի Էյրն.
50 Գէորգ աղա Էյրն.
500 Սրապեան Կարապետ աղա.
500 Եռաքել և Մարտիրոս աղայք.
250 Խանճեան Յարութիւն աղա Խազազ.
250 Համամճեան Յովհաննէս աղա „.
250 Ալէքսանեան Տիգրան աղա „.
200 Նքմէքճեան Յարութիւն աղա „.
100 Ընտան աղա Խապիրեան „.
100 Նիշտատճեան Թէոփիլ աղա „.
100 Թորոսեան Գրիգոր աղա „.
100 Մանուկեան Սերովբէ աղա „.
100 Գէորգեան Յակոբ աղա „.
100 Կարապետեան Գէորգ աղա „.
100 Ենդրանիկեան Աբրահամ աղա „.
100 Մ. Գաբրիէլ աղա „.
50 Զէլէպի Իլիաս „.
50 Քերոբէեան Մարտիրոս աղա „.
250 Փափազեան Խաչիկ աղա „.
100 Յակոբեան Մարգար աղա „.
100 Ենդրանիկեան Աբրահամ աղա „.
50 Մանուկեան Յովհաննէս աղա „.
100 Սրվանձեան Ս. Յարութիւն աղա.
100 Ղազարոսեան Սարգիս աղա.
100 Յովհաննէսեան Գէորգ աղա.
50 Քէրէստէճի Յովհաննէս աղա.
50 Թիւթիւնճի Մանուկ աղա.
50 Սինեոս Սաւա.
50 Զէլէպի Դօրկարի.
50 Պիտենեան Մ. Յակոբ աղա.
50 Նիշտատճեան Ի շան աղա.
70 Հապուքճեան Սուեվան աղա.
40 Սիմիւշճի Սիմոն աղա.
50 Հիրատճեան Պօղոս աղա.
300 Ոսկերիչ Բարթող աղա Սառատճեան.
200 Ոսկերիչ Քրիս աղա Պարապետեան.

119870

Մնացեալը հետեւեալ թիւերուն։

ՆՈՐԱՏԻՊ ԳՐԵԱՆՔ
ԽՆԴԻՐ
ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Այս մեծագոյն հայերէն աշխարհաբառ սեղանակ մը եկած է Փարիզէն՝ շաբաթական Հայաստան Գաղղիացիէ մէջ՝ որ Հայոց ազգին յառաջադիմութեանը վասն՝ կը յորդորէ մեզ, որ անոր արգելք եղող կրօնական վէճերը մեկ դի ձգելով՝ աշխատինք իրարու հետ միանալու եւ ազգին յառաջադիմութիւնը դիւրացնելու։

ԳԱՏԿԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գեղեցիկ եւ սրտաշարժ պատկեր մըն է Հայոց տեսնելուն վայելուչ զարդ մը ըլլալու արժանի։

Կը ծախուի մայրաքաղաքս Էօրեւ—Զրգմաղ խանը, Պ. Եդուարդ Մուրատեանին սենեակը, ուր կը գտնուի այս օրերս նաեւ արգոյ Հանրի աղա Էլմանեան Փարիզաբնակ հայ տպագրիչը՝ որ քանի մը տարիէ 'ի վեր իր գործարանէն հանած բազմաթիւ ընտիր և գեղեցկատիպ գիրքերովը՝ ինչպէս նաեւ իր մեկ քանի աշխատասիրութիւններովը ծանօթ է ազգիս բոլոր դրատիրաց։

ԳԵՕԳԵՄԻԵ
ԿԱՄ
ԳՈՒՇԱԿ
1862
ԹՈՒԱԿԱՆԻՆ

Պ. Ռոբերտ Քոլէճի Տարեկան հրատարակութիւն։

Մատրաքաղաքիս ամեն հայ գրավաճառներուն քով կը գտնուի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կայսերական հրամանաւ՝ հետեւեալ անշարժ առացուածներն ամուրգով պիտի վաճառուին դանձուց պաշտօնատան մէջ ամեն երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը։

Թրհալայի մէջ Պաթուլումպա անուն ջաղացք մը արքունական սեփականութիւն։

Հոյն նահանգին մէջ չորս քարուկիր մթերանոց (մագազա)։

Ենիշէհիրի նահանգին մէջ դեղարան մը։

Թոմաթվլա Տօլաս—Տերէսին ձիրան (մենդիլանէ) մը, որ անունով Ամատճեան Պ. Գէորգին է, և կայսերական հրամանաւ պիտի վաճառուի 'ի հաշիւ կայսերական գանձուն, որ յիշեալ Պ. Գէորգ Ամատճեանէն առնելիք ունի։

Ուզուն չարշին թաղիք շինողի (քէչէճիի) խանութ մը։

Այս անշարժ սեփականութեանց ամուրգին մասնակից ըլլալ ուզողները պէտք է վերը յիշուած օրերը գանձուց պաշտօնատունը երթան իրենց երաշխաւորներուն հետ։

Ասս լրագիրը շարաթն անգամ մը կելլէ չորեքշաբթի օրերը։ Ով որ կուզէ կրնայ ստորագրուիլ, Կ. Պոլիս՝ Զինիի խանը լրագրոյ գրասենեակը։ Իսկ դուրսերը հոգաբարձուներն են՝

ԻԶՄԻՐ. Յովհաննէս աղա Մազուտեան։
ԵԳԻՊՏՈՍ. Նաւարդ աղա Արիփարեան։
ԱՆԴՐԻԱՆՈՊՕԼԻՍ. Մանտեսի Սուքիաս աղա Դաղուստեան։
ՏՐԱՊԻԶՈՆ. Պ. Խաչատուր Էլմասեան։
ԹՈՒԱՔ. Մանտեսի Յակոբ աղա Աղլաղանեան։
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զարարեան։
ՊՐՈՒՍԱ. Կարապետ աղա Էսկիշեհիրլիեան։
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Պ. Տ. Մուրատեան։
ԹԷՔԻՐՏԱՂ. Պ. Գրիգոր Մաղդարացեան։
ՎԱՆ. Պ. Մկրտիչ Տ. Ատոմեան։
ԽԱՐԲԵՐԴ. Պ. Գէորգ Ճաֆարեան։
ԵՐԶՆԿԱ. Մ Դանիէլ աղա Խազանճեան։
ԱՏԱԲԱԶԱՐ. Մանտեսի Յակոբ աղա Տ. Գրիգորեան։

Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ուզողները՝ այս տեղերէն մեկուն հետ կրնան դիմել։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԴՐԱՄՈՑ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԸ ԹՂԹԱԴՐԱՄՈՎ 2 ՆՈՅԵՄԲԵՐ	Զորեքշաբթի 15	Երկ. 16	Ուրբ. 17	Շաբ. 18	Բշ. 20	Գշ. 21
	Ղուրուշ	Դրշ.	Դրշ.	Դրշ.	Դրշ.	Դրշ.
Օսմանեան լիրա Մէճիտիէ	219-30	222	221-20	222-30	227	255
« 20նոց Արծաթ	45-30	45-30	45-30	45	44	46
Խաղնէ Թանվիլի	89	89-15	89-35	95	95-20	96
Էսհամը Ճէտիտէ	74-20	74-15	75-20	76	76	70
Անդղլական լիրա	240	240	241	240	246	256
Գաղղիոյ 20 ֆրանքնոց ոսկի	195-15	192	191-20	192	198	205
« 5 ֆրանքնոց արծաթ	48	47-20	47	47	49	51
Ռուսի բոլ խմբէռեալ	196-20	196	195-20	196	202	209
Գարպոնմոյ	56	56	36-30	56	57	58
Սոֆորին	527	505	550	554	545	560
Աւստրիոյ գրրբմից	111	115	112-20	112	116	121
Հինգնոց քանոց հազարին	1020	880	1020	1020	1100	1120

ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ (ԴԱՄՊԻՕ) ԳԻՆԵՐԸ ԹՂԹԱԴՐԱՄՈՎ ԱՌԱՆՑ ՍՊԱՍՆԹՕՑԻ 2 ՆՈՅԵՄԲԵՐ

Լոնտրա 31 օր պայմանաժամ.
« 5 ամիս «
Փարիզ «
Մարսիլիա «
Վիէննա «
Թրիէստ «
Լիվորնո «
Ջենովա Լ. Ն. «

ԻՍԿ ՄԷԹԱԼԼԻՔԻ ԳԻՆ

Լոնտրա
Մարսիլիա

ԱՐՄՏԻՒ
ՊՕԼԻՍ 2 ՆՈՅԵՄԲԵՐ

Յորին Բումէլի	45—48
« Իոնիայի	55—60
« Կալացի	54—57
« Թայղան	56—61
« Իպրայիլ կակուղ	45—46
« Բումէլիի կակուղ	45—46
Եգիպտացորեն Կալացի	54—56
Գարի Բումէլի	20—22

Վաճառականոցիս մէջ կայ ընդ ամենը 200000 Գրիւ ցորեն եւ 30000 գրիւ գարի։

ՄԵՏԱՔՍ (ԻՓԷՔՔ)

Ֆէմբրուէշ ընտիր տակ.	«	Օս. լբ. 120 գր.
« 1	«	420—425
« 2	«	390—415
« 3	«	
Սէլէ Պրուսու ընտիր տակ.	«	
1.		540—580
2.		550—560
3.		
Մէշտուա 1.		330—370
2.		325—340
3.		
Ֆիլաթիւռ 10—12 եւ 11—12		420—440
Գօզա Պրուսա Հոր		170—195
Կէմլէք եւ Մանալըճ		120—180

ԶԱՆԱԶԱՆ ՆԻՒԹԵՐ

Իմտոր (Մազը) սեւ	16-20 17
Կանանչ եւ ճերմակ	7 — 8
Դեղին հատիկ (ճէնրի) Էնգլիզիս	5— 6
Հուրդ Գրրբմ կէս լուսց.	կնդ. 150—160
Չի լուսցած ուժ	150—120
Ցանկատանի	—
Թիֆթիք Անգլիոյ	— 34
Մանուշկիզ	
Ամֆիոն Գարա Հիսար	210—215
Ամֆիոն Գարա Հիսար	32—34
Քիմիք	50—52
Ցներու	
Խէժ Ադրիոյ (Զամք ատպի)	
Գղմնճ (Գազը) Թօքաթ	21—22
Պու Գրէշ-խան	2—23
Մեղրամոմ դեղին Տրապիզոն	30—3
Անատոլու	29—30
Կուսամ Բումէլիի Քիլ.	
Կատաատի հուտ (Քէմէն Թոխ.) Բում.	
Անատոլու.	
Զէթ (Զէյթին եաղը) Ադրիատիկ Հօիոյ	11—11-20
Կիրիտ	10-20—11
Բամբակ Գ.ԸՐՔ—Աղաճ եւ Գասապա	կնդ.
Ասր. Կիպրոս. Ատանա	
Կաղին (Ցնտաղ) Տրապիզոն	105—110
Բումէլի	130—135
Ընկնճ Եգիպտոս Մէշիա	Հիսդ. 6-20.
Ցամիէթ	6-20—7
Սաֆռ (Սապոն) Գանտիա	12 —
Միտիլի	11 —

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

		Ղուրուշ
Խանվէ Ռիսս եւ Գաֆիս 100	Հիսդ.	2100—2500
« Մարմարն եւ Սէյլան «	«	
Շաքար գլ. (քէսլէ) 6-10 Լ.	կնդ.	—
« փոշի (Թօզ)	«	—
« Հոլ. գլուխ	«	—
« փոշի	«	—
« Գաղղ. գլուխ	«	620—630
« փոշի	«	540—560
« Համանա մնատուկով	«	—
« Ռուքնով (չուվալ)	«	—
Պղպեղ (պիպէռ).	Հիսդ.	45—
Լեզակ (չիվիտ) Պլենկայա	«	550—560
« Մատրաս	«	7— 80
Որդան կարմիր (ղըրմըզ) առաջադրեալ	«	125—130
« տեսակ Բ.		80— 90
« « Խոնաւ		65— 70
Թէյ (չայ) Գանկոյ		38— 35
« Բէքօ	«	125—
անքաժուխ Նիւքիասթ ըլտկ. Շլ.		29—
« Լիվրուլ	«	27—
« Գաղտիք	«	25—25
Անագ (գալայ)	կնդ. Ղ.	1550—1560
Անուշատր (Նըշատըր)	Հիսդ.	
Պողպատ (Զէլիք) թ. 0 եւ 00	կնդ.	200—210
Կապար (Գուրշուն)	«	250—240
Թիմեռ (Թէնէքէ) զոյդ մնատուկ	«	510—525
Զինք տախտակ թ. 8—12	Հիսդ.	7—7-20
Երկաթ Անգ. Ռոպաճու (չուպուդ)	կնդ.	85—90
« Բեսեմոր	«	98—100
« Տախտակ	«	160—170
« Բոլորակ	«	—
« Ռուսիոյ	«	—
Բարքիճա	Հիսդ.	4—5
Ծծումբ (քիւքիւրտ) Իտալիա	կնդ.	80—85
Իսպիսպէճ ճէն զոյդ Մն.	«	360—370
« « Գէլճ.	«	175—180
« « Թրիէսթ	«	110—120
Ռոմ Անգղիոյ	Կալ.	16—17
« Ամերիկա	«	14—15
Գոնեաք	Հիսդ.	17-20—18
Ընկնճ Իտալիոյ	«	4-20—
« Հնդկաստանի	«	
Սաառմաչէթ Վենետ	«	50—52
« Թրիէստ եւ Գաղղ.	«	21—
Կարագ Ռուսիոյ	«	16-20—17
Քէլոսէլէ 14 Քիլ.	«	500—550
Բամպակ մանած թ. 8—14	«	21—22
12—20		25-20—24
16—24		25-20—26
20—30		27—30
« Ենքմրայ 8—14		24-20—25
12—20		27—28
16—24		29—30
20—30		30-20 52

Խմբագիր-Տնօրէն
Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
Կ. ... ԽԱՆ